դաս 42. քիմիական անալիզ. նավթային հանքավայրերի հետազոտություններ շահագործման նպատակով. ճարտարապետական ծառայություններ*. հետազոտություններ մանրէաբանության բնագավառում. ծառայություններ քիմիայի բնագավառում. հետազոտություններ քիմիայի բնագավառում. խորհրդատվություն ճարտարապետության հարցերով. հատակագծերի մշակում շինարարության բնագավառում. տեխնոլոգիական հետազոտություններ. նավթահորերի հսկողություն. հետազոտություններ կոսմետոլոգիայի բնագավառում. ինտերիերի ձևավորում. արդյունաբերական դիզայն. դիզայներների ծառայություններ փաթեթավորման բնագավառում. նյութերի փորձարկումներ. տեխնիկական նախագծերի ուսումնասիրում. երկրաբանական հետազննություն. նավթի հանքավայրերի հետազննություն. ճարտարագիտություն. օդերևութաբանական տեղեկատվության տրամադրում. հողաչափում. համակարգիչների վարձույթ. համակարգիչների համար ծրագրերի կազմում. նավթի հանքավայրերի հետախուզում. հետազոտություններ ֆիզիկայի բնագավառում. հետազոտություններ մեխանիկայի բնագավառում. մանածագործական արտադրանքի փորձարկումներ. երկրաբանական հետախուզում. հետազոտություններ երկրաբանության բնագավառում. արվեստի ստեղծագործությունների իսկության որոշում. չափաբերում (չափումներ). ծրագրային ապահովման մշակում. ծրագրային ապահովման արդիականացում. խորհրդատվություն համակարգչային տեխնիկայի մշակման և զարգացման ոլորտում. հագուստի մոդելավորում. գեղարվեստական դիզայն. որակի հսկողություն. ծրագրային ապահովման վարձույթ. նոր արտադրատեսակների հետազոտություն և մշակում երրորդ անձանց համար. գեղարվեստական ձևավորում (արդյունաբերական դիզայն). ստորջրյա հետազոտություններ. համակարգչային տվյալների վերականգնում. ծրագրային ապահովման սպասարկում. համակարգչային համակարգերի վերլուծություն. հետազոտություններ կենսաբանության բնագավառում. քաղաքների հատակագծերի կազմում. երկրաբաշխական փորձաքննություն (ճարտարագիտություն). համակարգչային համակարգերի նախագծում. ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական վերահսկողություն. համակարգչային ծրագրերի բազմացում. տվյալների կամ փաստաթղթերի փոխադրում ֆիզիկական կրիչից էլեկտրոնային կրիչի վրա. վեբ-կայքերի ստեղծում և տեխնիկական սպասարկում երրորդ անձանց համար. համակարգչային վեբ-կայքերի տեղադրում. համակարգչային ծրագրային ապահովման տեղակայում. ամպերի ցրում. տվյալների և տեղեկատվական ծրագրերի կերպափոխում, բացառությամբ ֆիզիկական կերպափոխման. խորհրդատվություն ծրագրային ապահովման հարցերով. վեբ-սերվերների վարձույթ. տեղեկատվական համակարգերի պաշտպանություն վիրուսներից. խորհուրդներ էներգիայի խնայողության հարցերով. գիտական հետազոտություններ շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում. ինտերնետի համար որոնման միջոցների տրամադրում. փաստաթղթերի թվայնացում (տեսածրում). ձեռագրի վերլուծություն (ձեռագրաբանություն). ջերմոցային գազերի արտանետումների կրճատման հետ կապված գիտական տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում. անտառի որակի գնահատում. բրդի որակի գնահատում. հեռակա հասանելիության միջոցով համակարգչային համակարգերի աշխատանքի մոնիթորինգ. ջրի անալիզ. գիտական լաբորատորիաների ծառայություններ. աուդիտ էներգետիկայի ոլորտում. վեբ-կայքերի դիզայնի ոլորտում խորհրդատվություն. ծրագրային

ապահովում որպես (SaaS) ծառայություն. տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտում աջակցության ծառայություններ (ծրագրային ապահովման անսարքությունների վերացում). գիտական հետազոտություններ. սերվերների հոսթինգ. կլինիկական փորձարկումներ. տվյալների պահեստային հեռապատճենման ծառայություններ. տվյալների էլեկտրոնային պահպանում. համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրավորման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում վեբ-կայքերի միջոցով. աշխարհագրական քարտեզներ կազմելու ծառայություններ. վիրտուալ համակարգչային համակարգերի տրամադրում «ամպային» հաշվարկների միջոցով. տեխնոլոգիական հարցերով խորհրդատվություն. համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում խորհրդատվություններ. հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում խորհրդատվական ծառայություններ. եղանակի տեսության ծառայություններ. համակարգչային անվտանգության ոլորտում խորհրդատվություն. տեխնիկական փաստաթղթերի կազմում. ինտերիերի դիզայն. շարժական հեռախոսների ապակողպում, բջջային հեռախոսների ապակողպում. համակարգչային համակարգերի մոնիթորինգ անսարքությունները բացահայտելու համար. վեբ-կայքերի տեղեկատվական կատալոգների ստեղծում և մշակում երրորդ անձանց համար (ծառայություններ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում). խորհրդատվություն համացանցային անվտանգության հարցերով. խորհրդատվություն տվյալների անվտանգության հարցերով. տվյալների կոդավորման ծառայություններ. համակարգչային համակարգերի հսկողություն չարտոնված մուտքերը կամ տվյալների կոտրանքը հայտնաբերելու համար. անձնական տվյալների էլեկտրոնային հսկողություն համացանցի միջոցով տեղեկատվության գողությունը հայտնաբերելու համար. վարկային քարտերով գործարքների էլեկտրոնային հսկողություն համացանցի միջոցով խարդախությունները հայտնաբերելու համար. ծրագրային ապահովման մշակում ծրագրային ապահովման հրատարակման շրջանակներում. հարթակ որպես ծառայություն (PaaS). համակարգչային հարթակների կատարելագործում. այցեքարտերի ձևավորում. գիտական և տեխնոլոգիական հետազոտություններ բնական աղետների ոլորտում. նավթի, գազի և հանքարդյունաբերության ոլորտներում հետախուզական ծառայություններ. գիտական և տեխնոլոգիական հետազոտություն արտոնագրային քարտեզագրման ոլորտում. հետազոտություններ շինարարական աշխատանքների ոլորտում. հետազոտություններ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում. հետազոտություններ եռակցման ոլորտում. բժշկական հետազոտություններ. գովազդային նյութերի գրաֆիկական ձևավորում. հաշվիչների վարձույթ էլեկտրաէներգիայի սպառման հաշվառման համար. էլեկտրոնային առևտրի գործարքների ժամանակ օգտագործողի վավերացման ծառայություններ. օգտագործողի վավերացման ծառայություններ՝ օգտագործելով մեկանգամյա մուտքի տեխնոլոգիան առցանց ծրագրային ապահովման հավելվածների համար. համակարգչային կոդի գրում. խորհրդատվություն հեռահաղորդակցության ցանցերի անվտանգության հարցերով. զգեստների ձևավորում ներկայացումների համար. ներկայացումների դեկորացիաների ձևավորում. նախատիպերի նախագծում. համակարգչային մոդելավորված մոդելների նախագծում. անօդաչու թռչող սարքով քարտեզագրական կամ ջերմագրական չափումներ կատարելու ծառայություններ. կրիպտոմայնինգ, կրիպտոարժույթի մայնինգ. պեղումների ոլորտում հետազոտություններ. համակարգչային գրաֆիկական դիզայն՝ տեսապրոյեկցիոն քարտեզագրման համար. թվային դատաբժշկական հետաքննություն կիբերհանցագործության ոլորտում. տեխնոլոգիական խորհրդատվական ծառայություններ թվային փոխակերպման համար. տվյալների կենտրոնի տարածքների վարձույթ. աշխարհագրական տեղեկատվության տրամադրում. չներբեռնվող աշխարհագրական քարտեզների առցանց տրամադրում. խորհրդատվություն արհեստական բանականության ոլորտում. հետազոտություն արհեստական բանականության տեխնոլոգիայի ոլորտում. օգտագործողների նույնականացման ծառայություններ՝ ծածկագրային (բլոկչեյն) տեխնոլոգիայի միջոցով. գեոտեխնիկական

հետազոտություններ. երկրաբանական փորձնական հորատում. համակարգչային և տեսախաղերի մշակում. քվանտային հաշվարկ. բջիջների մշակում գիտահետազոտական նպատակներով. համակարգչային ծրագրավորման ծառայություններ տվյալների մշակման համար. տեխնիկական ծրագրային ապահովման ծառայություններ տվյալների մշակման համար. լոգոների ձևավորման ծառայություններ. գոլֆի դաշտի նախագծում. զուտ զրոյական արտանետումների վերաբերյալ գիտական տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում. գենետիկայի ոլորտում գիտական հետազոտություններ. վաճառքից առաջ նոր և օգտագործված տրանսպորտային միջոցների զննում. հնագիտական պեղումներ. ներմուծվող կամ արտահանվող ապրանքների տեստավորում և անալիզ կարանտինը անցնելու նպատակով. աստղադիտակների վարձույթ. ծածկագրային (բլոկչեյն) տեխնոլոգիա որպես ծառայություն (BaaS). վիրտուալ միջավայրի հոսթինգ. գիտական մանրադիտակների վարձույթ. նեյրոմորֆիկ ճարտարագիտություն. օգտվողի կողմից ծրագրավորվող չկարգավորված մարդանման ռոբոտների վարձույթ. չներբեռնվող առցանց ծրագրային ապահովման տրամադրում. առցանց չներբեռնվող համակարգչային ծրագրային ապահովման տրամադրում ոչ փոխարկելի տոկենների հատման համար (NFTs). սմարթ պայմանագրերի համկարգչային ծրագրավորում ծածկագրային (բլոկչեյն) տեխնոլոգիա. ծրագրային ապահովման հարթակների հոսթինգ վիրտուալ միջավայրի հիման վրա աշխատանքային համագործակցության համար. լուսանկարների թվայնացում (տեսածրում). սմարթ ակնոցների վարձույթ. թմրամիջոցների առկայության ստուգում դատաբժշկական նպատակների համար. դատաբժշկական փորձաքննության ծառայություններ. ախտաբանական (պաթոլոգիական) փորձաքննություն դատաբժշկական նպատակների համար. ախտաբանական (պաթոլոգիական) փորձաքննություն դատաբժշկական նպատակների համար. շենքերի էներգաարդյունավետության փորձարկում. կրիպտոարժույթի էլեկտրոնային պահպանում. ձայնային չափման ծառայություններ. լաբորատորիաների ծառայություններ կենսաարտադրության համար. հայրության թեստավորում. արհեստական բանականություն որպես (IAaaS) ծառայություն. անասնաբուժական հետազոտություններ.

դաս 43. տեղերի ամրագրմամբ (հյուրանոցներում, պանսիոններում) զբաղվող գործակալություններ. սննդամթերքի պատրաստում և տրամադրում (քեյթրինգ). ծերանոցների ծառայություններ. սրճարանների ծառայություններ. սրճարան-նախաճաշարանների ծառայություններ. ճամբարային հարմարությունների տրամադրում. ճաշարանների ծառայություններ. ժամանակավոր կացարանի վարձույթ. պանսիոնների ծառայություններ. զբոսաշրջիկների համար տների ծառայություններ. հյուրանոցային կեցության ծառայություններ. մանկամսուրների ծառայություններ. ռեստորանների ծառայություններ. պանսիոնների ամրագրում. հյուրանոցների ամրագրում. ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ. խորտկարանների ծառայություններ. պանսիոններ կենդանիների համար. բարերի ծառայություններ. հանգստի ճամբարների ծառայություններ (կացարանի տրամադրում). շարժական շինությունների վարձույթ. ժամանակավոր կացարանների ամրագրումներ. մոթելների ծառայություններ. կահույքի, սեղանի սպիտակեղենի և ամանեղենի վարձույթ. սենյակների, դահլիճների վարձույթ հավաքների համար. վրանների վարձույթ. խոհանոցային սարքերի վարձույթ. խմելու ջրի բաշխիչ սարքերի վարձույթ. լուսավորող սարքերի վարձույթ. մթերքից խոհարարական արձանիկների ստեղծում. ընդունելության ծառայություններ ժամանակավոր կացարաններում (ժամանման և մեկնման կառավարում). վաշոկու ռեստորանների ծառայություններ. արիշտա ուդոնի և արիշտա սոբայի ռեստորանների ծառայություններ. սննդի ձևավորում. տորթերի ձևավորում. սննդի պատրաստման հարցերով տեղեկության և խորհրդատվության տրամադրում. անձնական խոհարարի ծառայություններ. նարգիլեի բարերի ծառայություններ. ընդունելության ծառայություններ ժամանակավոր կացարաններում (բանալիների հանձնում). կենդանիների ապաստանների ծառայություններ. ժամանակավոր կացարանների տրամադրում անցումային շրջանի տներում՝ հանցավոր ծագում ունեցող կամ թմրամիջոցների չարաշահման հակում

ունեցող մարդկանց համար. հանգստյան տների վարձույթ. խոհանոցային լվացարանակոնքերի վարձույթ. շարժական հանդերձարանների վարձույթ. սննդամթերքի զննման ծառայություններ (սննդի և խմիչքների մասին տեղեկատվության տրամադրում). սնունդը դուրս հանելու ռեստորանների ծառայություններ. կահույքի վարձույթ. գրասենյակային կահույքի վարձույթ. ռոբոտների վարձույթ ըմպելիքներ պատրաստելու համար. վիրտուալ խոհանոցի ծառայություններ. օդանավակայանի սրահների տրամադրում. օդանավակայանի սրահների մուտքի ամրագրում և կազմակերպում. տաք ուտեստների էլեկտրական փոքր կաթսաների վարձույթ.

դաս 44. կենդանիների բուծում. լանդշաֆտային այգեգործություն. հասարակական բաղնիքների ծառայություններ հիգիենայի նպատակներով. թուրքական բաղնիքների ծառայություններ. գեղեցկության սրահների ծառայություններ. բժշկական կլինիկաների ծառայություններ. մանուալ թերապիա (քիրոպրակտիկա). վարսավիրանոցների ծառայություններ. պսակների պատրաստում (ծաղկային արվեստ). ապաքինվողների համար տների ծառայություններ. հիվանդանոցների ծառայություններ. առողջապահական ծառայություններ. բանջարաբուծություն. այգեգործություն. գյուղատնտեսական սարքավորանքի վարձույթ. մերսում. բժշկական օգնություն. բուծարանագետների ծառայություններ. ֆիզիոթերապիա. առողջատների ծառայություններ. անասնաբուժական օգնություն. ատամնաբուժական օգնություն. ստոմատոլոգիա. բուժքույրական խնամքով տների ծառայություններ. պարարտանյութերի և գյուղատնտեսական այլ քիմիկատների օդային և մակերևութային տարածում. կենդանիների խնամք. արյան բանկերի ծառայություններ. ծաղկային հորինվածքների կազմում. հոսպիսներ. սիզամարգերի խնամք. մատնահարդարում. մանկաբարձական ծառայություններ. հիվանդների խնամք. խորհրդատվություն դեղագործության հարցերով. պլաստիկ վիրաբուժություն. ծառերի վիրաբուժություն. գյուղատնտեսական, ակվակուլտուրայի, այգեգործական և անտառային տնտեսության վնասատուների ոչնչացում. մոլախոտերի ոչնչացում. տնային կենդանիների խնամք. մազերի պատվաստում. հոգեբանների ծառայություններ. սանիտարատեխնիկական սարքավորանքի վարձույթ. ծառայություններ արոմաթերապիայի ոլորտում. արհեստական բեղմնավորում. թմրամոլությամբ հիվանդների վերականգնողական ծառայություններ. փորձանոթում բեղմնավորման ծառայություններ. արտամարմնային բեղմնավորման ծառայություններ. դաջում. հեռաբուժման ծառայություններ. լանդշաֆտային դիզայն. շոգեբաղնիքների ծառայություններ. արևաբուժարանների ծառայություններ. հանքաջրաբուժական կենտրոնների ծառայություններ. կոսմետոլոգների ծառայություններ. դեղագործների կողմից դեղերի պատրաստում դեղատոմսերով. թերապևտիկ ծառայություններ. ջերմոցային գազերի արտանետումների վնասակար ազդեցության նվազեցման նպատակով ծառերի տնկում. ծառայություններ ակվակուլտուրաների ոլորտում. բուժսարքավորումների վարձույթ. դիսպանսերներ. բուժկենտրոններ. ոչ ավանդական բժշկության ոլորտում ծառայություններ. խոսքի թերապիա. խորհուրդներ առողջության հարցերով. մոմով մազահեռացում. օրթոդոնտական ծառայություններ (օրթոդոնտիա). սահմանափակ հնարավորություններով անձանց համար բժշկական խորհրդատվություն. պիրսինգ. անտառազանգվածի վերականգնում. պալիատիվ խնամք. հանգստյան տների ծառայություններ. գյուղատնտեսական, ակվակուլտուրայի, այգեգործական և անտառային տնտեսության վնասատուների դեմ պայքարի ծառայություններ. մարդու հյուսվածքների բանկի ծառայություններ. կենդանիների վարձույթ այգեգործական նպատակների համար. մեղվափեթակների վարձույթ. կենդանիների օգնությամբ բուժում. բժշկական լաբորատորիաների կողմից տրամադրվող բժշկական վերլուծության ծառայություններ ախտորոշման և բուժման նպատակով. բժշկական զննում. խաղողագործության ոլորտում ծառայություններ. խորհրդատվություն խաղողագործության բնագավառում. տներ այցելող բուժքույրական խնամքի ծառայություններ. մազերը ոճավորելու սարքերի վարձույթ. բույսերի աճեցում. դիետայի և սննդակարգի վերաբերյալ խորհրդատվություն. վիրաբուժական ռոբոտների վարձույթ. վայրի բնության կառավարում. ասեղնաբուժություն. գավաթային թերապիա. հետծննդյան խնամքի ծառա-

յություններ. բժշկական նպատակներով գազ պարունակող շշերի և տարաների վարձույթ. լոգանքների համար հիդրոգենացված ջրի գեներատորների վարձույթ. վերականգնողական բժշկության ծառայություններ. գեղագետ դիմահարդարների ծառայություն. մազերի ներկման ծառայություններ. ծառերի էտում. ծառերի փոխպատվաստում. լանդշաֆտային ճարտարապետություն. էրգոթերապիա. առողջության գնահատման ծառայություններ. համայնքային այգեգործական հողամասերի տրամադրում. սափրիչների ծառայություններ. հաշմանդամություն ունեցող անձանց ծառայողական կենդանիների տրամադրում. պարային թերապիա. արվեստի թերապիա. երաժշտական թերապիա. բժշկական տվյալների հեռավար հսկում բժշկական ախտորոշման և բուժման համար. բժշկական բուժում մշակված բջիջների օգտագործմամբ. մշակված բջջների բանկի ծառայություններ բժշկական փոխպատվաստման համար. սովորելու հաշմանդամության ախտորոշման ծառայություններ. ուշադրության պակասության խանգարման ախտորոշման ծառայություններ. ուշադրության պակասության հիպերակտիվության խանգարման ախտորոշման ծառայություններ. տեսողական մշակման խանգարումների ախտորոշում. այգեգործական գործիքների վարձույթ. պատվաստումների ծառայություններ. շնչադիմակների վարձույթ արհեստական շնչառության համար. բժշկական զննում կարանտինը անցնելու նպատակով. բժշկական զննում. օպտոմետրիայի ծառայություններ. հոգեբուժական ծառայություններ. աշխատավայրում առողջապահական խորհրդատվություն. վիրաբուժական մանրադիտակների վարձույթ. հոգեկան առողջության վերականգնողական հաստատությունների ծառայություններ. ֆիզիկական վերականգնողական հաստատությունների ծառայություններ. ակնոցների վարձույթ. թմրամիջոցների առկայության ստուգում բժշկական ախտորոշման և բուժման համար. դատաբժշկական փորձաքննության ծառայություններ բժշկական ախտորոշման և բուժման համար. արևապաշտպան ակնոցների վարձույթ. ծխեցման ծառայություններ վնասատուների դեմ պայքարի նպատակով գյուղատնտեսական, ակվակուլտուրայի, այգեգործական և անտառային տնտեսություններում. ախտաբանական (պաթոլոգիական) փորձաքննություն ախտորոշման և բուժման նպատակով. մրցումների մասնակիցների դոպինգ թեստավորում՝ արդյունավետությունը բարձրացնող նյութերի օգտագործումը պարզելու նպատակով. օդային սերմնացան. քերիչի միջոցով թերապիա. հիդրոթերապիայի ծառայություններ. բժշկական թեստավորում ախտորոշման և բուժման նպատակով. դեմքի խնամքի ծառայություններ. կոմերցիոն ձկնորսության ծառայություններ. անասնաբուժական լաբորատորիաների կողմից տրամադրվող անասնաբուժական վերլուծության ծառայություններ ախտորոշման և բուժման նպատակով.

դաս 45. անձնական թիկնապահների ծառայություններ. ուղեկցում հասարակական վայրերում (ընկերակցում). խուզարկուական գործակալությունների ծառայություններ. հանդիպումների կամ ծանոթությունների կազմակերպման ակումբների ծառայություններ. գիշերային պահակային գործակալությունների ծառայություններ. գաղտնափականքների բացում. երեկոյան հագուստի վարձույթ. դիակիզում. կորած մարդկանց որոնում. թաղման ծառայություններ. թաղման բյուրոներ. հագուստի վարձույթ. պահակային ծառայություններ. ամուսնության գործակալությունների ծառայություններ. խորհրդատվություն ֆիզիկական անվտանգության հարցերով. հորոսկոպների կազմում. հրշեջ ծառայություն. կրոնական հավաքների կազմակերպում. երեխաների որդեգրման գործակալությունների ծառայություններ. կոտրանքից պաշտպանող անվտանգության համակարգերի հսկում. երեխաների հրավիրովի դայակների ծառայություններ. ուղեբեռի ստուգում անվտանգության նպատակով. տանտերերի բացակայության ընթացքում բնակարանում բնակեցնելու ծառայություններ. ընտանի կենդանիների խնամք. ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկատվության հավաքում. գտնված իրերի վերադարձ. միջնորդություն վեճերը լուծելու հարցում (իրավաբանական ծառայություններ). ձեռնարկությունների անվտանգության վիճակի ստուգում. հրդեհի ազդանշանիչների վարձույթ. կրակմարիչների վարձույթ. արբիտրաժի ծառայություններ. խորհրդատվություն

մտավոր սեփականության հարցերով. գործերի կառավարում հեղինակային իրավունքի բնագավառում. մտավոր սեփականության լիցենզավորում. հսկողություն մտավոր սեփականության բնագավառում իրավաբանական անձանց համար. իրավաբանական հետազոտություններ. դատարանում իրավունքների ներկայացում. ծրագրային ապահովման լիցենզավորում (իրավաբանական ծառայություններ). դոմեն անունների գրանցում (իրավաբանական ծառայություններ). վեճերի այլընտրանքային (արտադատարանային) լուծման ծառայություններ. չհրկիզվող պահարանների վարձույթ. տոհմաբանական հետազոտություններ. հարսանեկան միջոցառումների պլանավորում և կազմակերպում. սոցիալական ցանցերի առցանց ծառայություններ. հատուկ իրադարձությունների ժամանակ աղավնիների արձակում. զմռսման ծառայություններ. իրավաբանական փաստաթղթերի նախապատրաստում. գողացված ապրանքների տեղորոշման ծառայություններ. լիցենզիաներին վերաբերող իրավաբանական կառավարում. աստղագուշակների խորհրդատվություն. հոգևոր խորհրդատվություն. խաղաթղթերով գուշակելու ծառայություններ. ոճաբանի խորհրդատվություն անձնական զգեստների վերաբերյալ. անձնական նամակագրության խմբագրում. թաղման արարողությունների անցկացում. երրորդ անձանց համար պայմանագրերի համաձայնեցման հետ կապված իրավաբանական ծառայություններ. կրոնական ծիսակարգերի անցկացում. շներին զբոսանքի տանելու ծառայություններ. համացանցում դոմեն անունների վարձույթ. կիմոնո հագնելու օժանդակություն. իրավաբանական խորհրդատվություն մրցույթների հայտերին արձագանքելու վերաբերյալ. լիցենզավորում (իրավաբանական ծառայություններ) ծրագրային ապահովման հրապարակման շրջանակներում. իրավաբանական հսկողության ծառայություններ. քաղաքական ժողովների կազմակերպում. իրավաբանական խորհրդատվություն արտոնագրային քարտեզագրման ոլորտում. փաստաբանական ծառայություններ. դռնապանների ծառայություններ. հոգեբանական խորհրդատվություն ծանր կորստի դեպքերում. փրկարարական ծառայություններ. իրավաբանական ծառայություններ ներգաղթի ոլորտում. Տարո քարտերով գուշակությունների ծառայություններ երրորդ անձանց համար. կանոնադրական համապատասխանության աուդիտ. օրենսդրական համապատասխանության աուդիտ. սեփականության իրավունքի օրինական փոխանցում. քաղաքական լոբբիստական ծառայություններ. դիահերձարանի դիմահարդարների ծառայություններ. հսկողության ծառայություններ անօդաչու թռչող սարքի միջոցով. կարգի պահպանում. սոցիալական հարաբերությունների գործակալության ծառայություններ. անձնական գնումներ երրորդ անձանց համար. բժշկական ահազանգման հսկողություն. անվտանգության նպատակով օբյեկտների պահպանության ծառայություններ՝ հեռակառավարման հսկման համակարգերի միջոցով. կորած մարդկանց հայտնաբերում և հետևում. դատական կարգադրիչների ծառայություններ. հերթերում փոխարինման ծառայություններ. շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում իրավական հետազոտություններ. ծննդաբերության ընթացքում աջակցության ծառայություններ. տեսահսկման տեսախցիկների վարձույթ. կորած գույքի հայտնաբերում և հետևում. կենդանիների որդեգրման ծառայություններ. անհատների համար տնային խնամքի ապահովում ոչ բժշկական նպատակով. բովանդակության մոդերացիա ինտերնետ զրուցարանների համար. աշխատավայրում անվտանգության կանոնների վերաբերյալ խորհրդատվություն. հագուստի ընտրության հետ կապված գույների վերլուծության անհատական ծառայություններ. իրավաբանական ծառայություններ երեխաների պաշտպանության ոլորտում. իրավաբանական փաստաթղթերի մշակում. նոտարական ծառայություններ. պահակ շների վարձույթ. պահակ շների վարձույթ. ջրասուզակության համար կոստյումների վարձույթ*. պաշտպանական հագուստի վարձույթ. պաշտպանիչ սաղավարտների վարձույթ. անձնական իրերի պահպանում երրորդ անձանց համար:

---

(210) 20263261
(220) 15.10.2026
(730) «ԵՐԵՎԱԹԵՌ» ՍՊԸ, Երևան, Դավիթ Բեկ 176/6, ԱՄ

(540)



(511)

դաս 32. մրգի մզվածքներ, ոչ ալկոհոլային. ոչ ալկոհոլային մրգային ըմպելիքներ. կաթնաշիճուկային հիմքով ըմպելիքներ. ջրեր (ըմպելիքներ). բաղադրություններ գազավորված ջուր արտադրելու համար. լիթիումաջուր. հանքային ջրեր (ըմպելիքներ). զելտերյան ջուր. սեղանի ջրեր. քաղցուներ. լիմոնադներ. բանջարեղենի հյութեր (ըմպելիք). օշարակներ լիմոնադների համար. խաղողի չխմորված քաղցու. օրշադ. սոդայաջուր. շարբաթ (ըմպելիք). տոմատի հյութ (ըմպելիք). ոչ ալկոհոլային ըմպելիքներ. հաբեր գազավորված ըմպելիքներ պատրաստելու համար. փոշիներ գազավորված ըմպելիքներ պատրաստելու համար. գազավորված ջուր. սարսապարիլ (ոչ ալկոհոլային ըմպելիք). ոչ ալկոհոլային ապերիտիֆներ. ոչ ալկոհոլային կոկտեյլներ. ոչ ալկոհոլային մրգային նեկտարներ. իզոտոնիկ ըմպելիքներ. կվաս. ոչ ալկոհոլային ըմպելիքներ մեղրի հիմքով. սմուզիներ (մրգերի կամ բանջարեղենների խառնուրդների հիմքով ըմպելիքներ). հալվե վերայի հիմքով ոչ ալկոհոլային ըմպելիքներ. սոյայի հիմքով ըմպելիքներ, բացի կաթի փոխարինիչներից. պրոտեինով հարստացված սպորտային ըմպելիքներ. բրնձի հիմքով ըմպելիքներ, բացի կաթի փոխարինիչներից. սուրճի համով ոչ ալկոհոլային ըմպելիքներ. թեյի համով ոչ ալկոհոլային ըմպելիքներ. ոչ ալկոհոլային զովացուցիչ ըմպելիքներ. էներգետիկ ըմպելիքներ. չրերից պատրաստված ոչ ալկոհոլային ըմպելիքներ. շենդի. օսլայի հիմքով չոր խառնուրդներ ըմպելիքներ պատրաստելու համար. փոշիներ ոչ ալկոհոլային զովացուցիչ ըմպելիքներ պատրաստելու համար. մրգային քացախով ոչ ալկոհոլային ըմպելիքներ:

---

(210) 20263263
(220) 15.10.2026
(730) «ԷՅԱՅ ՊԱՐԿ» ՍՊԸ, Երևան, 0038, Աբելյան 6/1, ԱՄ
(540)



(511)

դաս 36. անշարժ գույքի վարձույթ, տարբեր մասնագետների համատեղ աշխատանքի համար գրասենյակների վարձույթ, անշարժ գույքի ծառայություններ, գրասենյակների վարձույթ (անշարժ գույք):

---

(210) 20263268
(220) 16.10.2026
(730) Դիաննա Արտակի Հարոյան, Արագածոտնի մարզ, Թալին, Գառնահովիտ, փ. 4, 16, ԱՄ
(540)



(511)

դաս 35. ցուցահանդեսների կազմակերպում անշարժ գույքի և կառուցապատման ոլորտում:

---

(210) 20263270
(220) 16.10.2026
(730) Դիաննա Արտակի Հարոյան, Արագածոտնի մարզ, Թալին, Գառնահովիտ, փ. 4, 16, ԱՄ

(540)




(511)

դաս 35. ցուցահանդեսների կազմակերպում անշարժ գույքի և կառուցապատման ոլորտում:

---

(210) 20263271
(220) 16.10.2026
(730) Դիաննա Արտակի Հարոյան, Արագածոտնի մարզ, Թալին, Գառնահովիտ, փ. 4, 16, ԱՄ
(540)



(511)

դաս 35. ցուցահանդեսների կազմակերպում անշարժ գույքի և կառուցապատման ոլորտում:

---

(210) 20263272
(220) 16.10.2026
(730) Դիաննա Արտակի Հարոյան, Արագածոտնի մարզ, Թալին, Գառնահովիտ, փ. 4, 16, ԱՄ
(540)



(511)

դաս 35. ցուցահանդեսների կազմակերպում անշարժ գույքի և կառուցապատման ոլորտում:

---

(210) 20263273
(220) 16.10.2026
(730) Դիաննա Արտակի Հարոյան, Արագածոտնի մարզ, Թալին, Գառնահովիտ, փ. 4, 16, ԱՄ
(540)



(511)

դաս 35. ցուցահանդեսների կազմակերպում անշարժ գույքի և կառուցապատման ոլորտում:

---

(210) 20263274
(220) 16.10.2026
(730) Դավիթ Գոգորյան Գրիգորի, ք. Վանաձոր, Աղայան փ. 86, բն. 1, ԱՄ
(540)



(511)

դաս 43. սննդամթերքի պատրաստում և տրամադրում (քեյթրինգ); սրճարանների ծառայություններ; սրճարան-նախաճաշարանների ծառայություններ; ռեստորանների ծառայու-

թյուններ; ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ; խորտկարանների ծառայություններ; բարերի ծառայություններ; անձնական խոհարարի ծառայություններ; սնունդը դուրս հանելու ռեստորանների ծառայություններ:

---

(210) 20263278
(220) 16.10.2026
(730) Մարինե Սամվելի Իսպիրյան, Երևան, Կոմիտասի պ., շ. 24/3, բն. 30, ԱՄ
(540)

VERGINIA CENTER

(511)

դաս 44. բժշկական կլինիկաների ծառայություններ, մանուալ թերապիա (քիրոպրակտիկա), մերսում, ֆիզիոթերապիա, հեռաբուժման ծառայություններ, թերապևտիկ ծառայություններ, խորհուրդներ առողջության հարցերով, վերականգնողական բժշկության ծառայություններ:

---

(210) 20263283
(220) 16.10.2026
(730) Ակսել Փիրյան, 6 Budard Road, 34500 Béziers, France, FR
(540)

YVNSTAY

(511)

դաս 36. անշարժ գույքի վարձույթ. միջնորդային գործունեություն. անշարժ գույքի գործակալությունների ծառայություններ. միջնորդություն անշարժ գույքի հետ կապված գործառնություններում. անշարժ գույքի գնահատում. անշարժ գույքի կառավարում. բնակելի ֆոնդի կառավարում. բնակարանների վարձույթ. բնակարանային բյուրոների ծառայություններ (անշարժ գույք); վարձակալական վճարների գանձում, գրասենյակների վարձույթ (անշարժ գույք); տարբեր մասնագետների համատեղ աշխատանքի համար գրասենյակների վարձույթ.

դաս 43. տեղերի ամրագրմամբ (հյուրանոցներում, պանսիոններում) զբաղվող գործակալություններ. ժամանակավոր կացարանի վարձույթ. զբոսաշրջիկների համար տների ծառայություններ. պանսիոնների ամրագրում, հյուրանոցների ամրագրում. հանգստի ճամբարների ծառայություններ (կացարանի տրամադրում), շարժական շինությունների վարձույթ. սենյակների, դահլիճների վարձույթ հավաքների համար. հանգստյան տների վարձույթ:

---

(210) 20263285
(220) 16.10.2026
(730) Անահիտ Դալլաքյան, Երևան, Ա. Խաչատրյան 33/2, բն. 39, ԱՄ
(540)

hյուր hyusq

(511)

դաս 18. ծովափի պայուսակներ. կանացի պայուսակներ.

դաս 25. գուլպաներ. բերետներ. բլուզներ. հագուստի օձիքներ. պարանոցի խողովակաձև շարֆեր. գլխանոցներ (հագուստ). շալեր. սվիտերներ, պուլովերներ. կիսագուլպաներ. հագուստ. բոլորագլխարկներ. հանովի օձիքներ. տաբատներ. ձեռնոցներ (հագուստ). շարֆ. առանց մատների ձեռնոցներ. շրջազգեստներ. զգեստներ. ասեղնագործ հագուստ.

դաս 26. մազակապեր. ասեղնագործած իրեր. դեկորատիվ իրեր մազերի համար. հերակալներ. զարդեր հագուստի համար. օղակապեր մազերի համար:

---

(210) 20263286
(220) 16.10.2026
(730) Ռոբերտ Մկրտչյան, Արմավիրի մարզ, գ. Սարդարապատ, Ա. Խանոյանի փ., տ. 16, ԱՄ

(540)

DITAK

(511)

դաս 9. ներբեռնվող համակարգչային ծրագրային ապահովում՝ արհեստական բանականության միջոցով վիրտուալ օգնականի գործառույթներ իրականացնելու, առաջադրանքների կառավարման և բիզնես գործընթացների ավտոմատացման համար. ներբեռնվող բջջային հավելվածներ՝ վիրտուալ օգնականի գործառույթների և առաջադրանքների կառավարման համար.

դաս 35. խորհրդատվություն բիզնեսի կազմակերպման և կառավարման հարցերով. բիզնեսի թվային փոխակերպման վերաբերյալ գործարար խորհրդատվություն.

դաս 42. համակարգչային ծրագրային ապահովման նախագծում և մշակում. համակարգչային ծրագրային ապահովման տեղադրում, սպասարկում և թարմացում. ծրագրային ապահովում որպես ծառայություն՝ արհեստական բանականության միջոցով վիրտուալ օգնականի գործառույթների, առաջադրանքների կառավարման և բիզնես գործընթացների ավտոմատացման համար. խորհրդատվություն արհեստական բանականության ոլորտում:

---

(210) 20263287
(220) 16.10.2026

(730) Անահիտ Դալլաքյան, Երևան, Ա. Խաչատրյան 33/2, բն. 39, AM

(540)

HYUSQCRAFTS

(511)

դաս 18. ծովափի պայուսակներ. կանացի պայուսակներ.

դաս 25. գուլպաներ. բերետներ. բլուզներ. հագուստի օձիքներ. պարանոցի խողովակաձև շարֆեր. գլխանոցներ (հագուստ). շալեր. սվիտերներ, պուլովերներ. կիսագուլպաներ. հագուստ. բոլորագլխարկներ. հանովի օձիքներ. տաբատներ. ձեռնոցներ (հագուստ). շարֆ. առանց մատների ձեռնոցներ. շրջազգեստներ. զգեստներ. ասեղնագործ հագուստ.

դաս 26. մազակապեր. ասեղնագործած իրեր. դեկորատիվ իրեր մազերի համար. հերակալներ. զարդեր հագուստի համար. օղակապեր մազերի համար:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐ, ԾԱԳՄԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ , ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔ

ГЕОГРАФИЧЕСКИЕ УКАЗАНИЯ, НАИМЕНОВАНИЯ МЕСТ ПРОИСХОЖДЕНИЯ, ГАРАНТИРОВАННЫЕ ТРАДИЦИОННЫЕ ПРОДУКТЫ

Տեխնիկական հատկորոշումների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնող և արտադրանքի համապատասխանությունը գնահատող մարմին

«Հայկական բրենդի» աշխարհագրական նշումներով արտադրանքի տեխնիկական հատկորոշումների պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացնող և արտադրանքի համապատասխանությունը գնահատող մարմին է հանդիսանում «ԷԿՈԳԼՈԲ» ՍՊԸ-ի արտադրանքի սերտիֆիկացման մարմինը:

Գտնվելու վայրը
Երևան, Համայնք Կենտրոն, Մ. Հերացու փ. 18, բն. 3

Գործունեության իրականացման վայրը
Երևան, Համայնք Կենտրոն, Արամի 80

Հեռախոս: +37499221295

Էլ. Հասցե: info@ecoglobe.com

Տեղեկություններ աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքի հայտերի մասին

Հայտի համար	2026001
Հայտի ներկայացման թվականը	13.03.2026
Հայտատուն (հայտատուները)	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Ծագման երկիրը	ԱՄ
Աշխարհագրական նշումը	ՀԱՅԿԱԿԱՆ ԲՐԵՆԴԻ АРМЯНСКИЙ БРЕНДИ ARMENIAN BRANDY
ԱԾՄԴ-ի դասը	33
Ապրանքի տեսակը կամ կոնկրետ ապրանքը	բրենդի

Ապրանքի հատուկ որակի նկարագրությունը՝

Հայկական բրենդին Հայաստանում թույլատրվող խաղողի սորտերից ստացված գինենյութի թորվածքից պատրաստված սպիրտային խմիչք է, որի արտադրությունը հիմնված է ավելի քան 130 տարվա բրենդիի պատրաստման շարունակական ավանդույթի վրա, որը սկսվել է 19-րդ դարի վերջում, երբ Հայաստանում բարելավվել են թորման մեթոդները՝ եվրոպական բրենդիի և գինու սպիրտի արտադրության գիտելիքների ազդեցությամբ: Ժամանակի ընթացքում հայ արտադրողները համապատասխանացրել են այս մեթոդները երկրի տերուարին (terroir) համահունչ՝ հաշվի առնելով կլիմայական, հողային և տեղագրական գործոնները, ինչպես նաև տեղական հատուկ խաղողի սորտերն ու բրենդիի արտադրական գործընթացները: Հայկական բրենդիի արտադրության սկիզբը դրվել է 1887 թվականին, երբ Ներսես Թաիրյանը պատմական Էրիվանի ամրոցում հիմնադրեց առաջին թորման գործարանը՝ սկսելով արտադրությունը, որը հետագայում ունեցավ համաշխարհային ճանաչում: Էկոլոգիական-տերուար առանձնահատկություններից ելնելով հայկական բրենդիի արտադրության համար առանձնացվել են 4 համասեռ խաղողագործական գոտիներ՝ որոնք ներառում են Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Լոռու, Տավուշի, Վայոց ձորի, Սյունիքի և Երևանի խաղողագործական տարածաշրջանները:

Կապն աշխարհագրական ծագման հետ՝

Հայկական բրենդիի որակը, բնութագիրը և միջազգային հեղինակությունը անբաժանելի կերպով կապված են դրա հումքի աշխարհագրական ծագման, Հայաստանի բնական և մարդկային գործոնների, ինչպես նաև 19-րդ դարից ի վեր Հայաստանում կիրառվող ավանդական արտադրական մեթոդների հետ: Թույլատրվում է օգտագործել միայն ՀՀ տարածքում արտադրված հայկական բրենդիի գինենյութի համար թույլատրված խաղողի սորտերը: Սերնդեսերունդ այս սորտերը հարմարվել են Հայաստանի յուրահատուկ կլիմայական, հողային և տեղագրական պայմաններին՝ ձեռք բերելով շաքարի և թթվի օպտիմալ հարաբերակցություն, ինտենսիվ բույր և կառուցվածքային տարրերի հավասարակշռություն, որն իդեալական է թորման համար: Բարձր լեռնային մայրցամաքային պայմաններին դրանց գենետիկական հարմարվողականությունը հանգեցնում է այնպիսի գինենյութերի, որոնցից ստացվում են արտահայտված մրգային համով, թարմ և համալիր թորվածքներ, որոնք սահմանում են Հայկական բրենդիի տարբերակիչ ոճը:

Աշխարհագրական գոտին՝ Հայաստանի Հանրապետություն

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՐԵՆԴԻ
ԱՊՐԱՆՔԸ՝ (սպիրտային խմիչքի կատեգորիա) ԲՐԵՆԴԻ
ԱՊՐԱՆՔԻ ԴԱՍԸ՝ 33

ԱՊՐԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական բրենդին հայկական օրենսդրությամբ թույլատրվող խաղողի սորտերից ստացված գինենյութի թորվածքից պատրաստված սպիրտային խմիչք է:

Հայկական բրենդիի ֆիզիկաքիմիական ցուցանիշներն են՝

- Էթիլ սպիրտի պարունակությունը՝ նվազագույնը 40 ծավ. %, առավելագույնը 57 ծավ. %,
- Շաքարի զանգվածային խտությունը՝ 7-ից 20 գ/լ,
- Ցնդող միացությունների զանգվածային խտությունը ≤ 1250 մգ/լ, անջուր սպիրտում,
- Մեթիլ սպիրտի պարունակության թույլատրելի մակարդակը ոչ ավել քան 2 գ/լ անջուր սպիրտում:

Հայկական բրենդիի ընդհանրական զգայաբանական ցուցանիշներն են՝

Հայկական բրենդին, սովորաբար, բնութագրվում է սաթից մինչև մուգ պղնձե գույնով, երբեմն՝ ոսկեգույն կամ կարմրավուն երանգներով՝ կախված տարիքից:

Բույրի պրոֆիլը, սովորաբար, ներդաշնակ է և բարդ՝ ներառելով

- մրգային երանգներ՝ թարմ, չորացրած կամ շաքարապատ,
- ծաղկային նրբերանգներ՝ մեղրային և կարամելային,
- համեմունքային նոտաներ՝ վանիլի, դարչինի, մեխակի և այլն,
- փայտային երանգներ՝ ընկուզային և շոկոլադային:

Քիմքում հայկական բրենդին, սովորաբար, կլորավուն, տաք, փափուկ և ներդաշնակ է՝ թեթևից մինչև լիամարմին կառուցվածքով՝ կախված տեսակից և տարիքից: Ավելի հասուն բրենդիներում կառուցվածքը ավելի ներդաշնակ է , թավշյա, իսկ կաղնեփայտային բաղադրիչներն՝ ավելի ինտեգրված:

Վերջնահամը, սովորաբար, միջինից մինչև երկարատև է, իսկ ավելի հին և երկար հնացված բրենդիներում՝ երկար, կայուն, հարթ և բազմաշերտ՝ մրգային, համեմունքային, քաղցր և փայտային երանգների պահպանմամբ:

Զգայական պրոֆիլը արտացոլում է խաղողի հումքի, թորման մեթոդների և հնացման պայմանների միջև փոխազդեցությունը:

ԱՊՐԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական բրենդիի յուրահատկությունները պայմանավորված են Հայաստանի բնակլիմայական պայմանների և արտադրությունում կիրառվող ավանդական մեթոդների փոխազդեցությամբ: Հայկական բրենդին առանձնանում է իր բարդ համահոտային պրոֆիլով, որը ձևավորվում է տեղական խաղողի սորտերի, ավանդական կրկնակի թորման և հնացման պրակտիկաների, ինչպես նաև հայկական բրենդիի արտադրությունում ձևավորված կուպաժավորման մասնագիտական փորձի փոխազդեցության արդյունքում:

Ապրանքը բնութագրվում է ալկոհոլի հավասարակշռված բարձր թնդությամբ, ներդաշնակորեն ինտեգրված կաղնեփայտի նոտաներով, ինչպես նաև մրգային, համեմունքային և քաղցր բույրային բաղադրիչների ներդաշնակ համադրությամբ:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԸ

Հայկական բրենդին արտադրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում աճեցված խաղողից ստացված գինենյութից: Խաղողը վերամշակվում է սպիտակի եղանակով, և ալկոհոլային խմորման արդյունքում ստացվում է գինենյութ:
Գինենյութը թորվում է պղնձե թորման սարքերում՝ առնվազն կրկնակի ֆրակցիոն թորման եղանակով: Ստացված սպիրտները հնացվում են կաղնե տակառներում: Հայկական բրենդին պատրաստվում է նվազագույնը 3 տարի հնացված սպիրտներից:
Հնացումից հետո վարպետ կուպաժավորողները տարախառնում են տարբեր բրենդիի սպիրտները՝ ստանալով հայկական բրենդի, որը համապատասխանում է պահանջվող ֆիզիկաքիմիական և զգայաբանական բնութագրերին:

ՄԱԿՆՇՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Մակնշման լեզուն
Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող Հայկական բրենդիի մակնշման տեղեկատվությունը պետք է ներկայացված լինի հայերեն:
«Հայկական բրենդի» անվանումը պետք է հստակ և տեսանելի կերպով նշված լինի պիտակի վրա:
Աշխարհագրական նշում
Ապրանքի անվանումը Հայկական բրենդի անվանումը և առևտրային անվանում պարունակող ապրանքային նշանը պետք է լինեն տեսանելի և գերիշխող այլ գրառումների նկատմամբ:
Կարող է նշվել նաև պաշտպանված աշխարհագրական նշման տարբերանշանը՝ օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում:

Դասակարգման նշում

Հայկական բրենդին մակնշվում է ըստ տարախառնուրդում օգտագործված ամենաերիտասարդ սպիրտի հնացման տևողության որպես՝

- Սովորական (Օրդինար)՝ երեքից հինգ տարի,
- Հասուն, այդ թվում՝
    - Միջահաս՝ առնվազն վեց տարի,
    - Հին՝ առնվազն տասը տարի,
    - Շատ հին՝ քսանմեկից երեսուն տարի,
    - Հնագույն՝ առնվազն երեսունմեկ տարի,
    - Գերհնացված (կոլեկցիոն)՝ հետկուպաժային հանգստից հետո առնվազն երեք տարի կաղնեփայտյա տակառներում:

Պիտակի վրա պարտադիր նշվում է ամենաերիտասարդ սպիրտի տարիքը:

Խաղողագործական գոտու կամ տարածաշրջանի նշում

Եթե օգտագործված խաղողը կամ գինենյութը առնվազն 85 %-ով ծագում է մեկ խաղողագործական գոտուց, տարածաշրջանից կամ փոքր վարչական տարածքից, ապա դրա անվանումը կարող է նշվել պիտակի կամ ետնապիտակի վրա:

Խաղողի սորտի կամ սորտերի նշում

Խաղողի սորտը կամ սորտերը կարող են նշվել պիտակի կամ ետնապիտակի վրա, եթե Հայկական բրենդիի արտադրության համար օգտագործված խաղողը ստացվել է մեկ կամ մի քանի սորտերից:

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հայկական բրենդիի աշխարհագրական գոտու սահմանները ընդգրկում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը, որտեղ իրականացվում են խաղողի մշակումը և գինենյութի արտադրությունը, սպիրտների թորումը, հնացումը, տարախառնումը և շշալցումը:

Հայկական բրենդիի ազգային համբավն արտացոլվում է երկրում խաղողի արտադրության, թորման և հնացման երկարամյա ավանդույթներով, որոնք պատմականորեն կապված են Հայաստանի հետ որպես ամբողջություն:

Հայաստանի տարածքում Հայկական բրենդիի արտադրության համար խաղողի մշակումը, հիմնականում, իրականացվում է խաղողի արտադրական չորս գոտիներում (Արարատյան դաշտի խաղողագործական գոտի, Վայոց Ձորի խաղողագործական գոտի, Տավուշի խաղողագործական գոտի, Սյունիքի խաղողագործական գոտի) , որոնք ներառում են մի շարք խաղողագործական տարածաշրջաններ:

ԿԱՊԸ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳՈՏՈՒ ՀԵՏ
(Աշխարհագրական միջավայրի կամ աշխարհագրական ծագման հետ ապրանքի կապի նկարագրությունը)

Բնական գործոններ

Հայաստանը բնութագրվում է արտահայտված բարեխառն մայրցամաքային կլիմայով՝ տաք և չոր ամառներով, ցուրտ ձմեռներով, ինչպես նաև օրական ջերմաստիճանների զգալի տատանումներով, հատկապես բարձրադիր հովիտներում:

Բարձրադիր տեղանքը նպաստում է խաղողի հասունացման առանձնահատուկ պայմանների ձևավորմանը: Խաղողի այգիների ոռոգման և թորման արտադրամասերի համար անհրաժեշտ ջուրը, հիմնականում, ստացվում է բնական աղբյուրներից և արտեզյան հորերից:

Հայկական բրենդիի սպիրտների հնացման մառանները տեղակայված են ծովի մակարդակից նվազագույնը մոտ 600 մետր բարձրության վրա, իսկ միջին բարձրությունը կազմում է ավելի քան 900 մետր, որը ապահովում է սպիրտների հնեցման առավել օպտիմալ և արդյունավետ պայմաններ՝ առանց լրացուցիչ ծախսերի:

Մարդկային գործոններ

Հայկական բրենդիի որակը նաև կապված է Հայաստանում դեռևս 19-րդ դարից ձևավորված արտադրական ավանդական տեխնոլոգիաների հետ: Դրանք ներառում են տեղական խաղողի սորտերի օգտագործումը, պղնձե թորման սարքերում կրկնակի ֆրակցիոն թորումը և հնացումը: Հայ վարպետների մասնագիտական փորձը ապահովում է հայկական բրենդիի զգայաբանական պրոֆիլի կայունությունը:

Հեղինակություն

Հայկական բրենդին ունի միջազգային ձևավորված համբավ, որը սկիզբ է առնում դեռևս 19-րդ դարի վերջից: Այն համաշխարհային ճանաչում է ձեռք բերել 1900 թվականին, երբ Փարիզի համաշխարհային ցուցահանդեսում արժանացել է Գրան Պրի մրցանակի:

Խորհրդային ժամանակաշրջանում հայկական բրենդին լայնորեն ճանաչվում էր որպես ԽՍՀՄ-ում արտադրվող ամենահեղինակավոր սպիրտային խմիչքներից մեկը:

Այսօր հայկական բրենդին արտահանվում է ավելի քան 50 երկիր և շարունակում է մնալ որպես հայկական ժառանգության ու թորման ավանդական հմտությունների կարևոր խորհրդանիշ:

Այս պատմական, բնական և տեխնոլոգիական գործոնների արդյունքում «Հայկական բրենդի» անվանումը միջազգային մակարդակով լայն ճանաչում է ստացել որպես ոգելից խմիչք, որը ասոցացվում է Հայաստանի և նրա գինեգործական ավանդույթների հետ:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

«Հայկական բրենդի» ապրանքի տեխնիկական հատկորոշմանը համապատասխանության վերահսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությամբ սահմանված լիազոր մարմինների և սերտիֆիկացման մարմնի կողմից:

«Հայկական բրենդի» աշխարհագրական նշումով արտադրանքի տեխնիկական հատկորոշումների դրույթների պահպանման նկատմամբ հսկողությունը իրականացնում է

«Էկոգլոբ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը: Հսկողությունն իրականացվում է սերտիֆիկացման մարմնի կողմից՝ հավատարմագրված լաբորատորիաների հետ համագործակցությամբ և լաբորատորիաների ներսում անցկացվող զգայական գնահատման իրականացմամբ:
Պետական վերահսկողությունն իրականացվում է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կողմից:
Արտադրողների խմբի կողմից կարող է նաև իրականացվել ներքին վերահսկողություն:
Սերտիֆիկացման մարմինը ապահովում է, որ Հայկական բրենդիի արտադրությունը և մակնշումը համապատասխանեն «Հայկական բրենդի» աշխարհագրական նշման համար սահմանված պահանջներին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության

գլխավոր քարտուղար՝ Հայկազ Նասիբյան

«_30_»__10__ 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «15» 10 2026թ №3079-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 666-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետը.

Հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2026 թվականի մարտի 11-ի ««Հայկական բրենդի» աշխարհագրական նշման տեխնիկական հատկորոշումները, սահմանները և հայկական բրենդիի, հայկական բրենդիի սպիրտների և հայկական բրենդիի գինենյութի ֆիզիկաքիմիական և անվտանգության ցուցանիշները և հայկական բրենդիի արտադրության համար նախատեսված խաղողի, հումքի, պատրաստի արտադրանքի մնացորդների, արտադրության և շրջանառության փուլերում դրանց շարժի և պատրաստի արտադրանքի ստացման ու իրացման քանակների հաշվառման փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» 666-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման)

կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի N 1 հավելվածի 14-րդ կետից հանել «բացառապես» և «կամ կաղնե փայտի հետ շփման միջավայրում՝ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան» բառերը.

2) Հրամանի N 1 հավելվածի 23-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«**23. Հնացում.** Հայկական բրենդիի սպիրտի հնացման նվազագույն ժամկետը երեք տարի է: Հնացումը կատարվում է կաղնե տակառներում:».

3) Հրամանի N 1 հավելվածի 30-րդ կետի 3-րդ ենթակետից հանել «բացառապես» և «կամ կաղնու փայտի հետ շփման միջավայրում՝ սույն հավելվածի 23-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան» բառերը:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Պետությունների, տարածքների և միջկառավարական կազմակերպությունների

ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ

AD	Անդորրա
AE	Արաբական Միացյալ Էմիրություններ
AF	Աֆղանստան
AG	Անտիգուա և Բարբուդա
AI	Անգիլա
AL	Ալբանիա
AM	Հայաստան
AN	Նիդեռլանդական Անտիլներ
AO	Անգոլա
AP	Մտավոր սեփականության աֆրիկյան տարածաշրջանային կազմակերպություն (ՄՍԱՏԿ)
AR	Արգենտինա
AT	Ավստրիա
AU	Ավստրալիա
AW	Արուբա
AZ	Ադրբեջան
BA	Բոսնիա և Հերցեգովինա
BB	Բարբադոս
BD	Բանգլադեշ
BE	Բելգիա
BF	Բուրկինա Ֆասո
BG	Բուլղարիա
BH	Բահրեյն
BI	Բուրունդի
BJ	Բենին
BM	Բերմուդա
BN	Բրունեյ Դարասսալամ
BO	Բոլիվիա
BR	Բրազիլիա
BS	Բահամներ
BT	Բութան
BV	Բուվեի կղզի
BW	Բոտսվանա
BX	Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների Բենիլյուքսի գերատեսչություն
BY	Բելառուս
BZ	Բելիզ
CA	Կանադա
CD	Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն
CF	Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն
CG	Կոնգո
CH	Շվեյցարիա
CI	Փղոսկրի Ափ
CK	Կուկի Կղզիներ
CL	Չիլի
CM	Կամերուն
CN	Չինաստան
CO	Կոլումբիա
CR	Կոստա Ռիկա
CU	Կուբա
CV	Կանաչ հրվանդան
CY	Կիպրոս
CZ	Չեխիայի Հանրապետություն
DE	Գերմանիա
DJ	Ջիբութի
DK	Դանիա
DM	Դոմինիկա
DO	Դոմինիկյան Հանրապետություն
DZ	Ալժիր
EA	Եվրասիական արտոնագրային կազմակերպություն (ԵԱԿ)
EC	Էկվադոր
EE	Էստոնիա
EG	Եգիպտոս
EH	Արևմտյան Սահարա
EM	Ներքին շուկայի ներդաշնակման գերատեսչություն (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ)
EP	Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ)
ER	Էրիտրեա
ES	Իսպանիա
ET	Եթովպիա
FI	Ֆինլանդիա
FJ	Ֆիջի
FK	Ֆոլկլանդյան կղզիներ (Մալվիններ)
FO	Ֆարոյան Կղզիներ
FR	Ֆրանսիա
GA	Գաբոն
GB	Միացյալ Թագավորություն
GC	Պարսից Ծոցի արաբական հանրապետությունների համագործակցության խորհրդի արտոնագրային վարչություն
GD	Գրենադա
GE	Վրաստան
GG	Գուեռնսեյ
GH	Գանա
GI	Ջիբրալթար
GL	Գրենլանդիա
GM	Գամբիա
GN	Գվինեա
GQ	Հասարակածային Գվինեա
GR	Հունաստան
GS	Հարավային Ջորջիա և Հարավային Սենդվիչ կղզիներ
GT	Գվատեմալա
GW	Գվինեա-Բիսաու
GY	Գայանա
HK	Հոնկոնգ
HN	Հոնդուրաս
HR	Հորվաթիա
HT	Հայիթի
HU	Հունգարիա
IB	Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության միջազգային բյուրո (ՄՍՀԿ)
ID	Ինդոնեզիա
IE	Իռլանդիա
IL	Իսրայել
IM	Այլովման
IN	Հնդկաստան
IQ	Իրաք
IR	Իրան (Իրանի Իսլամական Հանրապետություն)
IS	Իսլանդիա
IT	Իտալիա
JE	Ջերսի
JM	Ջամայկա
JO	Հորդանան
JP	Ճապոնիա
KE	Քենիա
KG	Ղրղզստան
KH	Կամպուչիա
KI	Կիրիբաթի
KM	Կոմորոս
KN	Սենտ Քիտս և Նևիս
KP	Կորեայի ժողովրդադեմոկրատական Հանրապետություն
KR	Կորեայի Հանրապետություն
KW	Քուվեյթ

KY	Կայմանյան Կղզիներ
KZ	Ղազախստան
LA	Լաոսի Ժողովրդա-դեմոկրատական Հանրապետություն
LB	Լիբանան
LC	Սենտ Լյուսիա
LI	Լիխտենշտայն
LK	Շրի Լանկա
LR	Լիբերիա
LS	Լեսոտո
LT	Լիտվա
LU	Լյուքսեմբուրգ
LV	Լատվիա
LY	Լիբիա
MA	Մարոկկո
MC	Մոնակո
MD	Մոլդովայի Հանրապետություն
ME	Մոնտենեգրո
MG	Մադագասկար
MK	Մակեդոնիա
ML	Մալի
MM	Միանմար
MN	Մոնղոլիա
MO	Մակաո
MP	Հյուսիսային Մարիանյան Կղզիներ
MR	Մավրիտանիա
MS	Մոնսեռատ
MT	Մալթա
MU	Մավրիկիոս
MV	Մալդիվներ
MW	Մալավի
MX	Մեքսիկա
MY	Մալայզիա
MZ	Մոզամբիկ
NA	Նամիբիա
NE	Նիգեր
NG	Նիգերիա
NI	Նիկարագուա
NL	Նիդեռլանդներ
NO	Նորվեգիա
NP	Նեպալ
NR	Նաուրու
NZ	Նոր Զելանդիա
OA	Մտավոր սեփականության աֆրիկյան կազմակերպություն (ՄՍԱԿ)
OM	Օման
PA	Պանամա
PE	Պերու
PG	Պապուա Նոր Գվինեա
PH	Ֆիլիպիններ
PK	Պակիստան
PL	Լեհաստան
PT	Պորտուգալիա
PW	Պալաու
PY	Պարագվայ
QA	Կատար
QZ	Եվրոմիության բույսերի տեսակների գրասենյակ
RS	Սերբիա
RO	Ռումինիա
RU	Ռուսաստանի Դաշնություն
RW	Ռուանդա
SA	Սաուդյան Արաբիա
SB	Սողոմոնյան Կղզիներ
SC	Սեյշելներ
SD	Սուդան
SE	Շվեդիա
SG	Սինգապուր
SH	Սուրբ Հեղինե
SI	Սլովենիա
SK	Սլովակիա
SL	Սիեռա Լեոնե
SM	Սան Մարինո
SN	Սենեգալ
SO	Սոմալի
SR	Սուրինամ
ST	Սաո Թոմե և Պրինցիպե
SU*	ԽՍՀՄ
SV	Էլ Սալվադոր
SY	Սիրիայի Արաբական Հանրապետություն
SZ	Սվազիլանդ
TC	Տուրկս և Կեյկոս Կղզիներ
TD	Չադ
TG	Տոգո
TH	Թաիլանդ
TJ	Տաջիկստան
TL	Արևելյան Թիմոր
TM	Թուրքմենստան
TN	Թունիս
TO	Տոնգա
TR	Թուրքիա
TT	Տրինիդադ և Տոբագո
TV	Տուվալու
TW	Տայվան (Չինաստանի երկրամաս)
TZ	Տանզանիայի Միացյալ Հանրապետություն
UA	Ուկրաինա
UG	Ուգանդա
US	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
UY	Ուրուգվայ
UZ	Ուզբեկստան
VA	Սուրբ Առաջնորդարան
VC	Սենտ Վինսենտ և Գրենադիններ
VE	Վենեսուելա
VG	Վիրջինյան կղզիներ (Բր.)
VN	Վիետնամ
VU	Վանուատու
WO	Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ)
WS	Սամոա
YE	Եմեն
YU	Սերբիա և Մոնտենեգրո
ZA	Հարավային Աֆրիկա
ZM	Զամբիա
ZW	Զիմբաբվե

*Նշված երկիրը գոյություն չունի